են և մոյզ կարմրագոյն են, իսկ միւսները առաւել մեծ և դեղնագոյն են: Առաջին տեսակ ձուերից դուրս են գալիս արու միջատներ, իսկ երկրորդ տեսակ ձուերից էգ: Դուրս գալուց յետո սրանք խառնակցում են և էգ միջատը դնում է միայն մէկ ձու, իսկ յետոյ մեռնում է: Պէտք է ասել, որ այս վերջինները ոչինչ չեն ուտում և կարծես ստեղծված են միայն խառնակցելու և ձու ածելու համար: Այս ձուն մնում է ամբողջ ձմեռը պահպանված վաղի ճեղքուածներում մինչև գարունք և գարունքին դուրս է գալիս նրանից այն տեսակ միջատ որ նկարագրեցի սկզբից: Այսպէս կարծես ինքը բնութիւնը աշխատել է, որ ֆիլոքսերայի սեռը չը ջնջուի: Եթէ ջնջենք այն միջատներին, որոնք արմատի վրա են ապրում, թեևրաւոր ֆիլոքսերան կը բազմացնէ նրանց:

Ֆիլոքսերան, որ ապրում է արմատի վրա, փչացնում է արմատը. նրա ծակած տեղերը սկսում են հաստանալ և վերջը փտում են, այնպէս որ վազը մնում է առանց արմատի և չորանում է: Իսկ նրանք, որ ապրում են տերևների վրա, ծակում են նրան, իսկ ծակած տեղերը կոշտանում են: Ֆիլոքսերան մեծ արագութեամբ է տարածվում: 1865 թուականին պատահում էր միայն Ֆրանսիայում, իսկ 1877 թուին անցաւ Աւստրիա, Շվեյցարիա և այժմ հասել է մինչև Ղրիմ: Պէտք է սպասել, որ մի քանի տարից յետո կը հասնի և Անդրկովկաս: Սրանց ձուերը կարող են շատ տարածվել թէ վարակված որթերի հետ, թէ պտուղների, և վերջապէս քամիի օգնութեամբ:

Ջնջելու միջոցներից ներգործողները սրանք են:

1. Այդիները ոռոգել երեսացել է ֆիլոքսերան ձմեռը հեղեղում են ջրով և թողնում են այնպէս մի 40 օր անընդհատ: Ցրտից և խոնաւութիւնից արմատի վրա ապրող միջատները մեռնում են:

2. Գետինը ոռոգում են ջրով, խառնած ածխածնի հետ. սրանից էլ միջատները սատակում են, իսկ վազերը չեն վնասվում: Բայց այս միջոցը երբեմն անօգուտ է լինում, որովհետև ածխածնումը (сѣрнистый углеродъ) շուտ է շոգիանում: Այս պատճառաւ առաջարկում են գործածել ածխածնմբային կալի„ (сѣрноуглеродистый калій): Այս վերջինը, եթէ $^1/_{25000}$ մասը խառնած լինի ջրի հետ՝ սպանում է 24 ժամում միջատին: Միայն սրա գործածելը շատ թանգ է և մարդ է պահանջում: Ամենից լաւ է, եթէ այս միջոցը գործ դնեն ձմեռը, երբ գետնում ասանց այն էլ կայ շատ ջուր: Գործ են ածում այսպէս. իւրաքանչիւր քառակուսի արշինի վրա փորում են գետինը երեք կամ չորս վերշոկ խորութեամբ, այն ջուրը մէջ են ածում և նորից ծածկում են հողով:

Ջնջելով միայն միջատներին, որոնք ապրում են արմատների վրա դեռ չենք ազատվում բոլորովին ֆիլոքսերայից. հարկաւոր է նմանապէս ոչնչացնել այն ձուները, որ ածում է թեևրաւոր ֆիլոքսերան տերևների վրա և վազի ճեղքուածներում: Որա համար որթի ճիւղերը շոգիի ներգործութեան են ենթարկում, կամ տաք ջուր են ածում ճիւղերի վրա. կամ թէ չէ ածում են ջրի հետ խառնած ածխածնումը:

Բացի ասածից սրանց հետ կարելի է պատերազմել և ուրիշ կերպով: Խաղողի մի քանի տեսակներին սրանք ոչինչ վնաս չեն տալիս. այս պատճառով առաջարկում են տնկել այդ տեսակները և դոցա վրա պատուաստել ցանկացածները: Աւելորդ եմ համարում այստեղ թուել մի առ մի բոլոր այն տեսակները, որոնք անվնաս են մնում ֆիլոքսերայից, կասեմ միայն, որ Ամերիկայի տեսակները ամենից լաւ են ընդիմանում նրան: Այս հարցի հետ առաւել մանրամասն ծանօթանալ ցանկացողները թող դիմեն պ. Յաբելի աշխատութեան (Цабель. „Гибель виноградниковъ) որտեղ կը գտնեն և ֆիլոքսերայի պատկերները:

Կասեմ թէ ինչ միջոցներ պէտք է յանձին առնէ հասարակութիւնը, որ պատրաստ է բոլոր բնակիչներին ինչպէս հարկն է հանդիպելու այս թշնամուն: 1) Ցպել փոքրիկ գրքոյկներ այս միջատի կեանքի և ջնջելու միջոցների՝ նկարագրութեամբ և տարածել բոլոր գիւղերում: 2) Առանձին թերթերի վրա նկարած ֆիլոքսերայի և հիւանդ որթերի պատկերները և նրա ջընջելու միջոցների համառօտ նկարագրութիւնը: 3) Ժողովրդական դասախօսութիւններ այդ հարցի վրա: Իսկ կառավարութիւնը իր կողմից պէտք է արգելի Ղրիմից և ուրիշ տեղերից որթ և խաղողներ, իսկ այդ կատարելու համար նշանակել վերահսկողներ:

Հրաչեայ Տէր-Ա....նց

ՆԱՄԱԿ ԵՐԻՒԱՆԻՑ

Դեկտեմբերի 18-ին

Ով որ բաղդ ունի «Պակ» լրագիրը կարդալու, թող առանձին ուշադրութիւն դարձնէ նրա 38 և 39-ը համարների առաջնորդող յօդուածին, ուր պ. Պապաջանեանցը քննում է վրօնը և նրա նշանակութիւնը ընդհանրապէս և ըստ իր առութեան՝ պատմական—փիլիսոփայական կէտից, քաղելով իր ասածները «Բիւսուրպակս Վ. Հոմբոլտի այդ մասին գրած երկասիրութիւնից»:

Ցայտնի է, որ «Մշակը» հաղարաւոր հայհոյանք է ստացել պ. Պապաջանեանից այն մտքի համար, թէ «Վրօնը համոզմունք է» և թէ փիլոքսերայի անհատ թող իր հարազատնքով վայելէ իր երջանկութիւնը. ուստի և հարկաւոր չէ հալածել անհատներին և կամ թէ այդպիսի անհատներից բաղկացած խմբերին, որովհետև քրիստոնէութիւնը մեզ այդպէս է ուսուցանում. Նա հալածանք չէ քարոզում և այլն: Ես չեմ քննում որքան ուղիղ և կամ սխալ է այս խոյանացքը, ես դարձնում եմ ընթերցողի ուշադրութիւնը միայն պ. Պապաջանեանցի լոգիկայի վրա. «Ես թէ ինչ է ասում նա «Չմին ազգերի կրօնը հիմնված էր մանաւոր և ոչ մէկ ընդհանուր ասացուածաբանութեան վրա, որ ուսուցանում է քրիստոնէական վարդապետութիւնը բոլոր մարդկերներին...» և շարունակում է. «այդ սկզբունքի ընդունելութեան ենք պարտական, որ հիմն է տալիս այն վնասաւոր պարբերը, որ մինչ ցայդ բաժանում էր միմեանցից մարդկային սեռի զանազան ցեղերը» Բայց յետոյ. Պ. Պապաջանեանցը իր յաջորդ ոճով շարունակում է. «այդպէս վարդապետվում խաչարի ու տգիտութեան մէջ խեղդուածներին, տարածում էր, մինչև որ բարբարոս ազգերը արշաւելով, ճչմարիտ լուսաւորութիւնը խրտնեցրին հրապարակից» Ցեսոյ. «Այդպէս ուրեմն, շարունակում է մեր փիլիսոփան, «կրօնական գործերում ամենաանչան միմանութիւնն անգամ, լինի նա մի ամբողջ վարչութիւն (կամ ասել մի ամբողջ վարչութեան կողմից) կամ մի ընկերութիւն (?) մարդուս հեռացնում է ասատուածպաշտութիւնից. հետեւաբար և նա դառնում է միայն մէ գործիք անձնական բարօրութեան յաջողութեան ու յաջաղտիմութեան համար»

Վերջապէս այդ տողերից յետոյ Գ. Աբեղեանն մի լաւ հայհոյում է և յօդուածը վերջացնում այսպէս. «Վրօնը իրեն բուն նշանակութիւնով անհատական է և հիմնվում է միայն իւրաքանչիւր անհատի իրեն ներկայացնելու առանձին եղանակի վրա»

Պատմական-փիլիսոփայական յօդուածի մէջ եթէ հասկանալի տեղեր կայնն, վերոբերեալներն են. մնացած կտորները կամ բոլորովին անհասկանալի են, կամ բոլորովին անմիտ բառեր են և կամ թէ բոլորովին չեն վերաբերում այժմեան կրօնական բանաքննութեան, որ շարունակվում է «Մեղուի» և «Մշակի» մէջ.

Վերոյբերեալ կտորներից երևում է, որ կրօնը հիմնված է անհատական համոզմունքի վրա. տեսնում ենք որ ոչ ոք չը պիտի միջամտէ ուրիշի կրօնական համոզման մէջ. տեսնում ենք որ հին ազգերի կրօնն էր բաժանում մարդկային սեռի զանազան ցեղերը միմեանցից:

Պ. Պապաջանեանց. եթէ դուք ընդունում էք որ վրօնը անհատական է, էլ ինչու էք հայհոյում մի և նոյնը քարոզողներին. եթէ դուք հիմնում էք կրօնը միմիայն անհատական համոզմունքի և ըմբռնողութեան եղանակի վրա, էլ ինչու էք հայհոյում այն անհատներին, որ այլապէս են ըմբռնում կրօնը, քան թէ դուք. եթէ համոզված էք որ հին ազգերի կրօնն էր միայն ընդունակ բաժանելու «մարդկային սեռի զանազան ցեղերը», էլ ինչու համար էք ջատագովում և պաշտպանում այն սկզբունքը, որ քրիստոնեայ հայերին բաժանում է միմեանցից, եթէ համոզված էք որ քրիստոնէական վարդապետութիւնը տապալեց այն վնասաւոր պարբերը որ բաժանում էր «մարդկային սեռի զանազան ցեղերը», հապա ինչով էք բացատրում մի և նոյն ազգի քրիստոնեայ անդամների մէջ եղած բաժանմունքները, էլ չեմ ասում զանազան ցեղերի միմեանցից բաժանվելը՝ մի և նոյն քրիստոնէական վարդապետութեան աչակերտելով հանդերձ.

Ինչպէս երևում է, պ. Պապաջանեան, դուք ձեր համոզմունքներին էլ չէք հետեւում. դրա պատճառը կարծում եմ ես այն է, որ ձեր համոզմունքը ձեր գլխի մէջը չէ, այլ զանազան գրքերի մէջն է. եթէ դուք ամէն բան էլ այնպէս լաւ սովորած լինէիք ինչպէս հայհոյանքներ էք սովորել, այն ժամանակ հինգ գլխով էլ աւելի կուենայիք.

Նորայր

ՆԵՐՔԻՆ ԼՐԻՐԵՐ

«Մշակի» հետեւեալ համարը կը հրատարակվի դեկտեմբերի 27-ին, իսկ վերջին համարը այս տարվայ մէջ դեկտեմբերի 30-ին:

Ստացանք Կովկասեան ուսումնարանական վարչութեան պ. հոգաբարձուից 79 ռուբլ, որ հանգանակած են իրանց մէջ ԲԱԳՈՒԻ ըէալական դպրոցի աշակերտները յօգուտ Վանի սովատանջ հայերի: Նուիրատուների ցուցակը կը տպենք.

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻ մեզ գրում են, որ այդտեղ հացի գինը կիսով չափ ընկել է. ալիւրի խալվարը, 30 պուդ, ծախվում է 50 ռուբլով, ցորենի խալվարը 36—40 ռ., իսկ գաբռա խալվարը 25—28, կամ 30 ռուբլ: Միաբ թանգ է, այսինքն ֆունտը 7 կոպէկով: Խոտը և յարդը շատ էժան են և գնող բոլորովին չը կայ: Այս տարի Նոր-Բայազէտի կլիմայի մէջ մեծ փոփոխութիւն է նշմարվում. սովորական բուքերի, ձիւնի և ցրտերի փոխարէն տեսած է գեղեցիկ և մինչև այս օրս չը տեսնված եղանակ, թէև մի երկու անգամ բարակ ձիւն եկաւ, բայց կարճ միջոցում կրկին հալվեց:

Մեզ գրում են ՕՐԴՈՒԲԱԹԻՑ. «Ինչեալ ամառում այցելեց մեր գպրոցը ժողովրդական ուսումնարանների կառավարչի օգնականը, թէ հասարակութիւնը և թէ ուսուցիչները շատ գոհ մնացին պարոնի վարմունքից և օգնական խորհուրդներից. Նախկին օգնականը վարվում էր կոչտ պօլիցեյական կերպով թէ աշակերտների և թէ ուսուցիչների հետ, իսկ սա բոլորովին հակառակ, մեզմէ վարմունք ունի»

ՕՐԴՈՒԲԱԹԻՑ մեզ հաղորդում են, որ գաւառապետի օգնական պ. Սուխանովի ջանքերի շնորհով, Օրդուբաթը և նրա շրջակաները այժմ բաւական ապահով դրութեան մէջ են աւազակների կողմից. Նոյնպէս հացը գնող չարչիներին զսպելով կարգադրած է որ որոշեալ գնից աւելի ոչ ոք ցրտեն չառնի, այնպէս որ այժմ ուտելիքների գները օրից օր իջնում են»

Պ. Ալէքսանդր Ադարատեանց, որ նորերումս հրատարակեց մի գիրք «Ֆարիկ Մանկան» և այդ գրքի մի օրինակը մեր խմբագրութեանն ընծայեց, ինդրում է մեզ տպել նեղանալու յայտարարութիւնը. «Այդ գիրքը պատրաստված է թէ քաղաքների և թէ գիւղերի ուսումնարանաց աշակերտների և աշակերտուհիների համար: Լեզուն պարզ և հասկանալի է, բովանդակած նիւթերը բաղմակերպ ու հետաքրքիր մանուկների համար: Գրքի գինը 40 կոպէկ է ամէն տեղ իսկ դուռմարով առնողներին զիջումն կը լինի: Նախվում է Թիֆլիսի բոլոր հայ դրատներում և լինի մեր, գիտել այս հասցէով. Тифлисъ, учителю Александру Араратянцу, на Фоминной улицѣ, № 15, домъ Григорія Давришова». Գիրքը տպված է ներկայ 1880 թուին Թիֆլիսում, Հ. Ենիթարեանցի և ընկ. տպարանում: Այդ գրքի մասին «Մշակը» կը յայտնի իր կարծիքը:

ՏԱԳԱՆԵՐՕԳԻՑ ստացանք 20 ռուբլ յօգուտ Վանի սովեալների հետեւեալ անձերից. Զօհրաբ Սալմիեան 5 ռ., Խաչատուր Պարսեան 1 ռ., Մի ոմն 1 ռ., Գաբրիել Պապաստեան 1 ռ., Մի ոմն 1 ռ., Յովսեփ 1 ռ., Յովհաննէս Մաթոսեան 40 կոպ., Մի ոմն 1 ռ., Նազարէտ Աշտեան 3 ռ., Խաչատուրեան 50 կոպ., Յակոբ Միհեսով 50 կ., Աստուածատուր Լուսեղեան 50 կ., Նիկիտա Բաբով 1 ռ., Սարգիս Անանեան 1 ռ., Արգամ Անանեան 1 ռ., Մի ոմն 1 ռ., Աւետիս Սակիսով 30 կ., Ալէքսանդր Քառամիշով 20 կ., Մատրոնա Քառամիշովա 10 կ., Ընդամենը 20 ռ. 50 կ., որից 50 կ. փոստի ծախսը հանելով, մընում է գումար 20 ռուբլ:

—

Ստացանք Դերբենտից պ. Գասպար Ամիրեանցից 10 ռուբլ յօգուտ Կ. Պոլսի «Մխիթարեան հայոց ընկերութեան»

—

Ստացանք պ. Գէորգ Շահնազարեանց ղը Շաֆուրից, Դերբենտից 10 ռուբլ նրա տարեկան տուրքը յօգուտ «Մխիթարեան ընկերութեան»

—

Շուշեցի Աստուած Աղամանց ուղարկելով մեզ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ 25 ռուբլ, գրում է մեզ հետեւեալ նամակը. «Ընդունելով «Մշակի» 206 համարի առաջարկութիւնը Մի ացեալ ընկերութեան օգնին փոխանակ միանուագ նուէրների տարեկան թէկուզ աւելի փոքրիկ վճարներով նպաստելու, ահա նուիրելով այս տարի քսան և հինգ ռուբլ, որ ուղարկում եմ ձեզ այս նամակովս, խոստանում եմ նոյն գումարը ամենայն տարի անխափան հասցնել ձեր խմբագրութեանը յիշեալ ընկերութեան օգնին»

—

Շնորհակալութեամբ ստացանք Ստեփանոս աւագ-քահանայ Տէր-Ստեփանեանցից նրա հրատարակութիւնը «Պզտիկ քրիստոնէական ուղղաբան հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ»: Դա գրքի երկրորդ տպագրութիւն է և յարմարեցրած է ծխական ուսումնարանների բոլոր բաժանմունքների և միջնակարգ դպրոցների առաջին դասատուների համար, Տպված է Թիֆլիսում 6. Մարտիրոսեանի տպարանում, ներկայ 1880 թուին.

—

Պ. Աղամեան ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ գրում է. «Կարդալով լրագրիդ 199 համարում ձեր հրաւէրը մարդկանց մի խումբ կազմելու, որոնք կամաւոր նուիրատուութեան օժանդակութեամբ կարողանան մի ընդհանուկ մարդ պահել Հայաստանում, կ. Փոլսում կամ Եւրօպայում, որ թիֆլիցի անդադար հայերի մասին եւրօպական լրագիրներին և համակրելով այդ գործին, խոստանում եմ, երբ կը կազմվի այդ տեսակ խումբ, այն օրից սկսած անդամական վճար հասուցանեմ այդ խմբին տարեկան տասն ռուբլ, քանի որ գոյութիւն կունենայ դա»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳՐԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 դեկտեմբերի: Լուր է տարածված, որ բանկի կառավարիչ Լամանակի շուտով կը թողնի իր պաշտօնը:

ԼՈՆԴՈՆ, 23 դեկտեմբերի: Իրլանդիայից հաղորդում են, որ ի նկատի ունենալով իրլանդական գաղտնի ընկերութիւններին Լիվերպուլի և Բիրմինգամի մէջ գենքերի պահեստներ կազմելու համար, կառավարութիւնը ձեռնարկել է նախազգուշական ընդարձակ միջոցներին: „Լորդ Վերդեն" նեռի տակ տօրպեդներ են գտել: Այդ գործը ֆենիաներին են վերաբերում

Կ. ՊՕԼԻՍ, 23 դեկտեմբերի: Երկի պետութիւնների դեսպանները ներկայացրին Բ. Դրանը միաձայն գրութիւն միջնորդ դատարանի մասին:

ԱԹԵՆԵ, 23 դեկտեմբերի: Աւանդ են, որ պետութիւնները նորից համաձայն առաջարկութիւններ արին յունական կառավարութեանը միջնորդ դատարանի մասին: Շուտով ծանայութեան կը հրատարկեն պահեստի զօրքերը և ժողովրդական զվարդիան, որի զինուորները 30—40 տարեկան հասակի կը լինեն:

ՓԱՐԻԶ, 23 դեկտեմբերի: Միջնորդ դատարանի մերժելը Բ. Դրան կողմից սրա վերջնական խօսքը չէ կարելի համարել: Ռուսաստանը և Անգլիան հաստատակամ պաշտպանում են ֆրանսիական կառավարութիւնը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 դեկտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ. 25 կ., երկրորդ 93 ռ., երրորդ 93 ռ. 25 կ., չորրորդ 93 ռ. 12 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 226 ռ. 25 կ., երկրորդ 219 ռ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ռ. 25 կ., երկրորդ 91 ռ. 37 կ., երրորդ 91 ռ. 37 կ., օսկի 8 ռ. 2 կ., Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 25,3 պէնս, ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա 213 մարկ 75 պֆ., Փարիզի վրա 264 ֆր. 25 սանտիմ

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ